ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ
ԿԱՌԱՎԱՐՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արձանագրություն N 1

քաղաք Երևան քսաներեքը մայիսի երկու հազար տասներեք թվականի

ՀՀ արդարադատության նախարարության սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2013 թվականի մայիսի 23-ի նիստում ուսումնասիրեց և ամփոփեց սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգմանն ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունն օրենքի պահանջներին:

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝

Ա. Օրբելյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Ն. Արզունյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության դատական ակտերի հարկադիր կատարման և քրեակատարողական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ

Ք. Մկրտչյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության իրավաբանական անձանց պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի բոլոր անդամները ներկա էին, և քվորումն ապահովված էր:
Ներկա էր հանձնաժողովի քարտուղար Ի. Գզողյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

Սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգման ամփոփում՝ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Օրակարգի հարցի հետ կապված Ա. Օրբելյանը նշեց, որ սույն քննությունը իրականացվում է հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Սնանկության գործով կառավարչի որոկավորման կարգը հաստատելու մասին» N 1179-Ն որոշումը, որը լրացվել և փոփոխվել է ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի N 451-Ն որոշմամբ, որի 1-ին կետի համաձայն. «**Մինչև 2013 թվականի մայիսի 30-ը**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն անցկացնում է որակավորման ստուգում: Ստուգմանը մասնակցելու համար դիմողը ներկայացնում է դիմում, անձնագիր և դրա պատճենը, սնանկության գործով կառավարչի գործունեության իրականացման լիցենզիա ունենալը հավաստող ապացույց և 2 գունավոր լուսանկար՝ 3x 4 չափսի: Սույն կետով նախատեսված ստուգման մասին հայտարարությունը՝ ստուգումն անցկացնելուց հինգ օր առաջ տեղադրվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում (www.moj.am): Սույն կետում նշված որակավորման ստուգման հանձնաժողովը բաղկացած է երեք անդամից, որոնց նշանակում է լիազոր մարմնի ղեկավարը: Հանձնաժողովը 5-օրյա ժամկետի ավարտին հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ստուգում է ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունն օրենքի պահանջներին, որի հիման վրա տրամադրում է որակավորման վկայական:»: Այսինքն սույն քննությունը տարբերվում է ընդհանուր կարգով իրականացվելիք քննություններից, և իրականացվելու է բացառապես փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգման համար դիմել էր 7 թեկնածու: Քարտուղարը ներկայացրեց, որ բոլոր մասնակիցները ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը, դրանք ուսումնասիրվել են և ամբողջականության տեսակետից հարցեր չեն առաջացել: Հանձնաժողովը ուսումնասիրեց դիմումները և հաստատեց վերջիններիս կից փաստաթղթերի ամբողջականությունը:

Երկու դիմումներ, որոնց կից ներկայացված փաստաթղթերի հետ առաջացել են որոշ հարցեր, քննվեցին առանձին:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց երկու դիմորդների փաստաթղթերը, որոնցում առկա էին հնարավոր թերություններ: Այսպիսով, ուսումնասիրվեցին Էդվարդ Համբարյանի (Լիցենզիա N 008) և Արթուր Մանվելյանի (Լիցենզիա N 035) փաստաթղթերը, որոնք լիցենզիան ստացել էին ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 18-ի N 616 որոշմամբ հաստատված կարգի համաձայն, ինչն էլ նախատեսում էր լիցենզիայի գործողության ժամկետ՝ հինգ տարի, այսինքն, եթե նշված լիցենզիաները դադարել են գործելուց, ապա վերջիններս չեն կարող ստանալ համապատասխան որակավորման վկայական:

Միևնույն ժամանակ նշված լիցենզիաներում (իրավունքը հավաստող փաստաթղթում) գործողության ժամկետ նշված չէր:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց, որ նմանատիպ հարց առաջացել էր նաև 2012 թվականի նոյեմբերի 2-ին կայացած սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգման ժամանակ, որի ընթացքում փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նշված լիցենզիաները չնայած որ տվել են ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 18-ի N 616 որոշմամբ հաստատված կարգի համաձայն, սակայն արդեն Լիցենզավորման մասին ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո (այսինքն 2001 թ. օգոստոսի 08-ից հետո), իսկ Լիցենզավորման մասին ՀՀ օրենքը նախատեսել է անժամկետ լիցենզիաներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. հաստատել փաստաթղթերի հիման վրա սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգման վկայականներ ստացած մասնակիցների ցանկը՝ ըստ հավելվածի.

ընդունվեց միաձայն

2. հաստատել, որ բոլոր դիմորդները անցել են որակավորման ստուգումը և որակավորված են որպես սնանկության գործերով կառավարիչ.

ընդունվեց միաձայն

3. սույն արձանագրությունը հրապարակել արդարադատության նախարարության կայքում և բոլոր դիմորդներին մեկ շաբաթվա ընթացքում հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել արդյունքների մասին.

ընդունվեց միաձայն

4. հաստատել, որ որակավորում ստացած սնանկության գործերով կառավարիչները կարող են ծանուցման պահից 10 օրվա ընթացքում իրենց վկայականը ստանալ արդարադատության նախարարությունից.

ընդունվեց միաձայն

Արձանագրությունը կազմված 4 (չորս) էջից՝ ներառյալ կից հավելվածը:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. ՕՐԲԵԼՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. ԳԶՈՂՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՑԱՆԿ

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

N	Անուն, ազգանուն	Վկայական
1.	Աղաջանյան Հրայր Հրանտի	Տրվել է վկայական
2.	Առաքելյան Համլետ Վազգենի	Տրվել է վկայական
3.	Համբարյան Էդվարդ Միսակի	Տրվել է վկայական
4.	Հովհաննիսյան Աշոտ Արամայիսի	Տրվել է վկայական
5.	Մանվելյան Արթուր Կառլենի	Տրվել է վկայական
6.	Մարտիրոսյան Վազգեն Եղիշի	Տրվել է վկայական
7.	Վահանյան Աշոտ Մկրտիչի	Տրվել է վկայական